Ծ Ր Ա Գ Ի Ր
<<Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր>> առարկայի

Բացատրագիր

<<Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր>> առարկայի ուսուցումը ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նպատակ ունի շարունակաբար զարգացնել ուսուցանվողների գործնական կարողությունները համապատասխան իրավիճակներում գրագետ և կազմակերպված գործելու, տուժածներին անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու, խուճապային իրավիճակները կանխելու, հնարավոր վնասները և կորուստները նվազագույնի հասցնելու համար: Առարկայի ծրագիրը կազմելու ժամանակ հաշվի է առնվել, որ մասնագիտական կրթության համակարգում սովորողները հանրակրթական դպրոցում <<Նախնական զինվորական պատրաստություն>> առարկան ուսումնասիրելով արդեն որոշակի գիտելիքներ ձեռք են բերել:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակչության գրագետ և կազմակերպված վարքագիծն ու գործողությունները արդյունավետ միջոց են անկանխատեսելի իրավիճակներում վնասները կրճատելու և բարդություններ չստեղծելու համար: Իրավիճակները անկանխատեսելի են հենց նրանով, որ դրանք չեն ծրագրավորվում, սակայն օրինաչափորեն հնարավոր են համարվում: Այդ պատճառով էլ կատարվող գործողություններն իրականացվում են արագ ընդունվող որոշումների հիման վրա, ինչի համար համապատասխան գրագիտությունը անհրաժեշտ է:

ՈՒսումնական հաստատությունները սույն առարկայի ուսուցման ընթացքում պետք է սերտ կապ պահպանեն ԱԻՆ տեղական կառույցների հետ, հնարավորության դեպքում ներգրավեն նրանց մասնագետներին:

Առարկայի ուսուցումն իրականացվում է մեկ կիսամյակի ընթացքում և ամփոփվում է ստուգարքով:

ՈՒսումնական հաստատությունները սույն ծրագրով նախատեսված ուսումնական պարապմունքներից բացի պետք է նաև իրենց տարեկան ընդհանուր միջոցառումների շրջանակներում պարբերաբար անցկացնեն ուսուցողական վարժանքներ, հավաքներ, հանդիպումներ բժշկական հիմնարկների աշխատողների հետ: Դրանց պետք է ներգրավվեն ոչ միայն ուսանողները, այլ նաև հաստատության աշխատակիցները:

Թեմատիկ պլան

N	Թեմա	ժամ		
		ընդ.	որից	
			տես.	գործն.
1	Բնակչության և տարածքների պաշտպանության պետական կառավարման միասնական համակարգը	2	2	
2	Քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը և խնդիրները	4	4	
3	Արտակարգ իրավիճակներ, առաջացման պատճառները և դասակարգումը	2	2	
4	Տարերային բնույթի արտակարգ իրավիճակներ	4	4	
5	Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ	6	6	
6	Ժամանակակից և սովորական զենքերի տեսակները	4	4	
7	Արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքների պաշտպանության կազմակերպումը	6	4	2
	Ընդամենը	28	26	2

Թեմա 1. Բնակչության և տարածքների պաշտպանության պետական կառավարման միասնական համակարգը

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պետական կառավարման միասնական համակարգի կառուցվածքը, գործունեության հիմնական ուղղությունները:

Թեմա 2. Քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը և խնդիրները

Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների էությունը, անհրաժեշտությունը և առանձնահատկությունները: <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> ՀՀ Օրենքը: Քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը և ղեկավարումը Հայաստանի Հանրապետությունում: Քաղաքացիական պաշտպանության կառույցները և ուժերը, տարբեր իրավիճակներում նրանց խնդիրները: Քաղաքացիական պաշտպանության ազդանշանները: Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցները: Քաղաքացիական պաշտպանության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքների անընդհատությունը, պատասխանատու կառույցների պարտականություններն ու խնդիրները: Կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, դրանց խնդիրները, ձևավորումը և ուսուցումը: Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

Թեմա 3. Արտակարգ իրավիճակներ, առաջացման պատճառները և դասակարգումը

Արտակարգ իրավիճակի հասկացությունը և արտակարգ իրավիճակների բնութագիրը: Արտակարգ իրավիճակների դասակարգումը, պատճառները, ընդհանուր հետևանքները: <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը: Արտակարգ իրավիճակներում գործելու և վարքագծի առումով երկրի բնակչության իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:

Թեմա 4. Տարերային բնույթի արտակարգ իրավիճակներ

Վտանգավոր բնական երևույթները որպես տարերային բնույթի արտակարգ իրավիճակների պատճառ: Հայաստանի համար առավել տիպական բնական աղետները, դրանց վտանգների գոտիները և հետևանքները: Կենսաբանական աղետների տեսակները, պատճառները և դրսևորումները: Ըստ կոնկրետ կենսաբանական աղետների բնակչության վարքագծի դրսևորումները, վարվելակերպի կանոնները և առանցքային գործողությունները: Առանձին բնական աղետների կանխմանն ուղղված աշխատանքները: Բնակչության իրազեկվածության ապահովման կարևորությունը:

Թեմա 5. Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ

Տեխնածին աղետների հետևանքով ստեղծվող արտակարգ իրավիճակները, դրանց տեսակները և վտանգավոր գործոնները: Ռադիոակտիվ արտանետումների վտանգները: Քիմիական նյութերի արտանետումների վտանգները: Ըստ կոնկրետ քիմիական աղետների բնակչության վարքագծի դրսևորումները, վարվելակերպի կանոնները և առանցքային գործողությունները: Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումները: Բնակչության իրազեկվածության ապահովման կարևորությունը:

Թեմա 6. Ժամանակակից և սովորական զենքերի տեսակները

Ժամանակակից և սովորական զենքերի տեսակները և բնութագրերը: Ժամանակակից զենքերի օգտագործման հետևանքով ստեղծվող իրավիճակը և բնակչության պաշտպանության միջոցառումները: Բնակչության վարվելակերպի կանոնները: Կոմունալ-տեխնիկական ցանցերի վթարները և բնակչության կենսապահովման միջոցառումների կազմակերպումը:

Թեմա 7. Արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքների պաշտպանության կազմակերպումը

Արտակարգ իրավիճակների մասին ազդարարման միասնական համակարգը, ազդարարման միջոցները: Բնակչության տարհանումը և դրա կազմակերպումը: Անհատական պաշտպանության միջոցները, դրանցից օգտվելու կարգը: Անհատական պաշտպանության պարզագույն միջոցները:
Ճառագայթային և բաժնեչափական հսկման սարքեր, ճառագայթային հետախուզության սարքեր, քիմիական հետախուզության սարքեր, դրանց տեսակները և շահագործման կարգը:
Բնակչության ուսուցման և հրահանգավորման կազմակերպման կարևորությունը: Բնակչության վարքագծի կանոնները կենսաբանական և քիմիական վտանգների ժամանակ: ՈՒսուցողական և վարժական միջոցառումների կազմակերպումը և անցկացումը: